



ԲԱՆՎԱՐԱՆԻ



ԱՊՐԻԼ 27-Ի ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հարիւր եօթանասուն և երեք տարի առաջ՝ արշալոյսի մը ծիփերուն՝ Ս. Ղազարու կղզեակը տրամաթախիծ ու մահաբոյր սուգով մը կը հաւաքուէր։ Սիրասնունդ որդիներ, ծերունիք և երիտասարդք՝ ամէնքը որբացած՝ վշտակոծ սըրտով և արտասուալից աչքերով կ'ողբային ամենամեծ կորուստը Հայ Ազգին՝ իրենց պստուածարեալ Հօր, որ յետ այնքան բեղուն երկնանուէր և հայրենանուէր կենաց և արդենաց՝ ղէպի անմահութիւն կը փոխուէր։

Մեծ Սեբաստացին էր զա, որ սակայն մահուանէ վերջ ալ պիտի ապրէր միևնոյն տեսութեամբ, միևնոյն նպատակով՝ յօգուտ Եկեղեցւոյ և Ազգին՝ իր հիմնած միաբանութեան միջոցով։ Այդ օրունէն ի վեր նուիրականութիւն մ'ունի եր. Հիմնադրին բոլոր որդիներուն համար Ապրիլ ամիսը։ Սա մինչ յետադարձ խոհերով ղէպի անցեալը կը փոխադրէ սրտերն ու մտքերը, ու կը բանայ պահ մը անոնց առջև սրտալոյզ տեսարանը Միխիթարայ փոխման, կարծես միաժամանակ կը դառնայ յանկարծ քրոնիշեան հնազանդի

ծոցին մէջ՝ Նախահօրմէս քանդակուած ոսկի խօսք մը, թէ իր փոխումը մահ չէ, անմահութիւն է, ապրիլ է. կայ և պիտի ապրի նաև անոր աստուածակերտ Տունը Տիրամօր հովանւոյն ներքե՛լ շնորհիւ Անոր կենսատու պարզեներուն։

Նուիրական ու մեծ յիշատակիս առթիւ «ՔԱՅԱՎԱՐ» կը ներկայացնէ այս անգամ Միխիթարայ պարզ և հոգեշունչ մէկ յորդորը Ս. Կուսին պաշտպանութեան վրայ, հանելով փորրիկ անտիպ տեսքակէ մը, զոր կազմած են Հիմնադրին իսկ աշակերտները, զրի առնելով ինչ որ նա՝ մինչև իսկ իրենց մանկական խօսակցութեանց և զբօսանաց ժամերուն՝ ուղղած է իրենց, ինչպէս կը գտնենք տետրակին սկիզբը. «ԵՐԱՏԵ Ի ԳԵՐՁԱՐ. ԳՈՏ ԱՐԱՍ ԸՐԵ ՄԵՐՄԷ ՏՈՒՆԱՐ. Ի ԿԱՍԱՆԻ ԵՆՐԻՆԺԱՅԻԳ ՈՒՆԿԱՅՐՈՒՔԱՄԻՔ ՀԱՐԱԿՐԵՆԵԱՅՔ»։ Լուսանորոգ Հայրս այսպէս օգտուելով ամենաբնական առիթներէն իսկ՝ նպատակ ունեցած է զարգացնել անոնց մատաղ հասակը, զուարթութեան մէջ բարոյական օգուտն ալ խառնելով։



Եւ արդէն շատ անգամ ի զոհացումն է տեղնց անմեղունակ հարցումներուն, միշտ համեմելով իր խօսքերը, ինչպէս Երկնային Վարդապետը, օրինակներով և առակներով, ախորժելի, հետաքրքրական և դիւրիմաց ընծայելու համար։

Հ. Ղ. Տ.

« Յաւուր միում ասաց ինձ գերարգելին, թէ պաշտպան զոր ասեմք, այն է, որ զոմն պահպանէ ի ձեռաց թշնամուն, և միշտ պահպանելով զնա ս'չ թողու, զի ոք գանիցէ զնա և կամ զայլ ինչ փաս հասուցանիցէ նմա։ Արդ՝ դիցուք, թէ ոմն զուլով անզօր, նեղի ի թշնամաց և այլոց վտանգից, և ոչ ունի զհար. ի հարկէ պիտոյ էմա ոք պաշտպան, զի պահիցէ և պաշտպանիցէ զինքն. արդ՝ առ ո՞վ պարտի դիմել։ Եթէ ասիցես թէ դիմես, ցէ առ թագաւորն, նա է դատաւոր, զո՞վ ուրեմն պարտի կաշնուլ ինքեան պաշտպան և միջնորդ առ այն։

« Պատասխանեալ ասացի ես, թէ ո՞չ գիտեմ։

« Ասաց գերարգելին, թէ մինչ ի քաղաքին այնմիկ զոյ ոմն իմաստնագունեղ, արի, զգօն, բարի, և արդիւնունակ քան զամենայն իշխանս և դատաւորս, որոյ և աղաչանքն զործունէարար լսելի լինին թագաւորին, եթէ մարդն այն կաշնուցու զնա պաշտպան ինքեան, և ապաստանիցի ի նա, յանձնելով զինքն նմա, արդարեւ ի ձեռն միջնորդութեան նորա յո՞ւ և իցէ վտանգաց ջատագովեցեալ զերծանի։ Եւ

մինչ կաշեալ զնէն զնա ի բանտի՝ յաղազս իրիք մեղաց նորին, առաքէ զոք առ նոյն պաշտպանն իւր, և կոչեալ զնա առ ինքն, աղաչէ՝ զի երթայցէ առ թագաւորն կամ առ դատաւորն, և միջնորդիցէ առ ի զերծուցանել զինքն ի բանտէն, և նա զնացեալ բարեխօսէ առ թագաւորն կամ առ դատաւորն, որով ազատի ի բանտէն։ Բայց այսպիսի մարդն՝ պարտի բազմիցս մատուցանել զընծայս այսպիսոյ պաշտպանին իւրում, և տալ նմա զպատիւ և զյարգութիւն առաւել քան այլոց իշխանաց, և յամենայն պիտոյս իւր դիմել առ նա։

« Ըստ այսմ օրինակի ևս ի մէջ ամենից սրբոց առաւել իմաստուն, առաւել զթած, առաւել բարի, և արդիւնաւոր, նաև առաւել մեծ առ ամենասուրբ Երուրդութիւնն, զո՞վ խնդրես ընտրել պաշտպան քեզ, զի և ես առ այս լինիցիմ վկայ, և աղօթիցեմ վասն քոյ։

« Պատասխանեալ առ այս ասացի, թէ զՍրբունի Կոյսն Մարիամ Աստուածածինն։

« Ասաց գերարգելին. Բարի է, բայց Աստուածածինն է յոյժ խոնարհ, և զիտնարութիւնն սիրէ. նաև է կոյս, և զկուսութիւնն սիրէ, և կամի զի և այլք սիրիցեն զխոնարհութիւն և զկուսութիւն, և իցեն խոնարհք և կոյսք։ Ուրեմն դու ևս պարտիս սիրել զխոնարհութիւն և



Միսթար և Նորըմծայ մամուկմեր

զկուսութիւն, և լինել խոնարհ և կոյս, որպէս զի և նա պաշտպանիցէ զքեզ:

«Նաև պարտիս սիրել զնա առաւել քան զամենայն սուրբս, և առաւել պատուել զնա, և առաւել պատկառիլ ի նմանէ: Եւ ևս բազում անգամ պարտիս տալ նմա զընծայս, զի և նա բարեխօսելով վասն քոյ առ Որդին իւր միածին, ազատիցէ զքեզ ի բանտէ մեղաց, քանզի մեք որքանիցս մեղանշեմք՝ անկանիմք ի յաւիտեանական բանտն: Ուրեմն քանիցս անգամ ասես զողջոյնն հրեշտակական կամ զայլ ազօթս առ նա՝ պարտիս ջերմաւորութեամբ ասել, և այսու բազմիցս փառացանել նմա զբազում բնծայս: Բազում անգամ ևս պարտիս բռնալ զհոգեւոր հիւանդութիւնն և զսկարութիւնն քո առաւ-

ջի նորա, և աղաչել զի բարեխօսիցէ Գրիստոսի, որպէս զի տացէ քեզ զգործութիւն և զշնորհ՝ առ ի ոչ մեղանշել. քանզի նա առաւել բազում անգամ յանդիման լինի Գրիստոսի քան զայլս սուրբս՝ առ ի բարեխօսել առ նա. ուստի այլք սուրբքն յիւրաքանչիւրում մօի մի անգամ տօնեցեալք լինին. բայց սա յիւրաքանչիւրում մօի զբեթէ քսանիցս և երեսնիցս տօնեցեալ լինի: Փանզի տօնի Յղութիւն նորին, Աւետումն, Այցելութիւն, Վերափոխումն, և այլք բազումք հանդիսութիւնք նորին:

«Ուրեմն երթ բարեպէս յանձնեա զքեզ նմա, և կոր ինչ ասացի, բարեւոք ի միտ առ, և զատարեան զասացեալն իմ, և ես ևս վկայեցից և աղօթեցից վասն քոյ»:

ԿՈՐԵԱՆ ՅԻՇԱԾՔ “ԲԱՔԻԼԱՍ,, ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

(ԵԴԵՍՒՈՅ ԲԱՔԻԼԱՍ ԿԱՄ ԲԱՔՈՒԼԱՍ ՀԱՅՐԱՊԵՏԸ)

ԿՈՐԵԱՆ զբերն մէջ յիշուած Եղեհիոյ անուանի եպիսկոպոս Բաքուլաս, որ զբըշտգրաց սխալ ընթերցմամբ ու զըութեամբ եղած է Բաքիլաս¹, և նոյն վրիպակը անցնելով Մ. Խորենացւոյ² և Ղ. Փարպեցւոյ³ պատմութեանց մէջ՝ Բաքիլոս կամ Բաքիլոս եղած⁴, — Ե զարու ասորի եպիսկոպոս ներու կարգին մէջ մեծագոյն զէմքերէն մին է, որուն վրայ կ'արժէ հակիրճ տեսնելու զեկութիւն մը տալ, միւր զորոց գիւտի պատմութեան մէջ կարեւոր դեր մը կատարած ըլլալով, և յաճախակի առնչութեան մէջ գտնուելով Ս. Սահակայ և Ս. Մեսրոպայ հետ:

Եղեհիոյ Քրոնիկոնին համեմատ, Բաքուլաս եպիսկոպոս ընտրուած է 412 թուականին: Սա հեթանոս էր, քրտմի որդի, մեծ հարստութեան և բարձր դիրքի տէր: Իմաստասիրական ուսմանց մէջ զարգացած, անկեղծ ու եռանդուն հոգի մը, հետամուտ կ'ըլլայ ճանչնալու ճշմարիտ կրօնը, և Աստուած կը լուսաւորէ անոր միտքը: Կ'երթայ Երուսաղէմ, կ'այցելէ սուրբ վայրերը, կը մկրտուի Յորդանան գետին մէջ, կը դառնայ հայրենիք, կը վաճառէ բոլոր ստացուածները ու զբամբ կը բաշխէ աղքատներուն, գերիններ կ'ազատագրէ, կը թողու՝ ընտանիք ու պաշ-

1. Կրեւն. Պատմութիւն Ս. Մեսրոպայ. Վենետիկ. 1894. էջ 18:

2. Մ. Խոր. Պատմ. Հայոց. Վենետիկ. 1827. էջ 519:

3. Ղ. Փարպ. Պատմ. Հայոց. Վենետիկ. 1878. էջ 40:

4. Այդ անուան վրիպակը անդադարձած է նաև շատ տարիներ առաջ Գլխ. Յ. Վ. Մարկուարտ (տես Հոմ. դեա Ամսոր. 1912. էջ 665):